

ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԵՎ ԶԳԱՅԱԿԱՆ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎՈՒՄ

Զ. Ա. ԶԱՂԱՅԱՆ

Իմաստասիրության ողջ պատմության ընթացքում որքան բարդ, նույնքան և կարևոր է եղել լեզվի ու մտածողության փոխհարաբերության խնդրի լուծումը: Այս հարցը իր զարգացման գործընթացում եղել և մնում է ոչ միայն իմաստասիրության, այլև լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկը: Իր թովանդակությամբ խնդիրը համակողմանիորեն առնչվում է փիլիսոփայական հիմնահարցի՝ մատերիայի և ոգու առաջնայնության իմացաբանության հիմնական հարցի հետ. ըստ էության, այս առումով այն կարելի է դիտարկել իբրև **լեզվաբանության հիմնական հարց:**

Մատերիայի և ոգու առաջնայնության հարցը քննարկելիս (որի լուծման բնույթով են փիլիսոփաները բաժանվում երկու հիմնական ուղղությունների՝ մատերիալիստների և իդեալիստների) ոչ մի փիլիսոփա չի կարող չանդրադառնալ լեզվի և մտածողության փոխհարաբերության խնդրին, քանզի թե՛ հոգեկանի և թե՛ նյութականի բազմակերպ, հարափոփոխ ու տարաբնույթ ոլորտներում փ՛նչը կարող է առավել ճշգրտորեն ապացուցել ոգու առաջնությունը մաքուր, նյութական և ո՛չ մի հյուլեով չմիջնորդավորված մտածողությունից բացի, որը այս դեպքում ներկայանում է իբրև գերագույն Ոգու բացարձակ արտահայտություն. և ճիշտ հակառակը, երբ ապացուցելի է դառնում, որ նույնիսկ առաջին հայացքից նյութականի հետ ոչ մի աղերս չունեցող մտածողությունը ոչ միայն մատերիայի գոյության բարձրագույն ձևի՝ ուրեղի ֆունկցիան է, այլև այդ ֆունկցիան իրականանում է խոսքի միջոցով, և սրանով իսկ ապացուցվում է **Մեծն նյութի առաջնայնությունը:**

Այստեղ տեղին է հիշատակել Մարքսի հանրահայտ ասույթը. «Ոգու վրա ի սկզբանե ծանրացած է մի նզովք՝ «ծանրաբեռնված» լինել նյութով, որն այստեղ ի հայտ է գալիս օդի, հնչյունների շարժվող շերտերի տեսքով, մի խւււքով լեզվի տեսքով: Լեզուն նույնքան հին է, որքան գիտակցությունը: Լեզուն գործնական գոյություն ունեցող իրողություն է նաև ուրիշների համար, և միայն դրա համար այն նաև ինձ համար գոբււքւյուն ունեցող իրական գիտակցություն է...»¹:

Եթե նկատի առնենք խոսքի բովանդակային կողմի և մարդկային գիտակցության բովանդակության փոխկապվածությունը², ինչպես նաև լեզվի և խոսքի տարբերակման անհրաժեշտությունը, պետք է համաձայնել «Խոսքը իրական գիտակցություն է»³ Վ. Զ. Պանֆիլովի խմբագրման, հետ, սակայն որոշ վերապահությամբ: Բանն այն է, որ Մարքսի վերոբերյալ ասույթում մեր կողմից ընդգծված դատողության մեջ ըստ երևույթին պետք է ավելացնել նաև «որևէ այլ նշանային համակարգ» արտահայտությունը, այսպիսով այն կստանա հետևյալ տեսքը՝ **խոսքը կամ որևէ այլ նշանային համակարգը՝ իրական գիտակցություն է:** Լեզվի և մտածողության փոխհարաբերության այսպիսի ըմբռնումը այն հիմնաքարն է, որի վրա հենվելով՝ դիալեկտիկական մատերիալիզմը լուծում է լեզվաբանության հիմնական հարցը կամ դրա հետ առնչվող առանձին խնդիրներ: Մարդկային իմացության պատմության ողջ ընթացքում լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցը լուծելիս միշտ բախվել են տրամագծորեն հակադիր տեսակետներ՝ լեզուն և մտածողությունը միմյանց լիովին հակադրելուց մինչև դրանց բացարձակ նույնացումը: Անտիկ փիլիսոփայական համակարգում նախապես նույնացվում էր լեզուն և մտածողությունը՝ երկուսի համար էլ առաջարկելով միևնույն «լոգոս» տերմինը⁴: Պլատոնի և իր հետևորդների համար արդեն բնութագրական են լեզվի և մտածողության տարբերակման ձրգտումները: Իդեալիստական աշխարհայացքը դավանող շատ մտածողներ, թեպետ ընդունում են

¹ К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 3, М., 1955, с. 29.

² Э. Г. Аветян. Природа лингвистического знака. Ер., 1968, с. 3.

³ В. З. Панфилов. Взаимоотношение языка и мышления, М., 1971, с. 16.

⁴ Т. В. Васильева. Беседы о логосе в платоновском «Тезтете». В Платон и его эпоха. Москва, 1979, с. 278—300.

լեզվի կամ որևէ այլ նշանային համակարգի դերը մտածողության գործընթացում, այնուամենայնիվ գտնում են, որ լեզվի և մտածողության կապը օրգանական չէ, և մտածողությունը կարող է կերպավորվել առանց լեզվական միջնորդության⁵: Լեզվի և մտածողության հակադրությունը սուբյեկտիվ իդեալիզմի որոշ ներկայացուցիչների մոտ ընդունում է որպես լեզվի և մտածողության ընդհանրապես խզման բնույթ. ըստ Ջ. Բերկլիի՝ լեզուն արգելակում է մտքի գործունեությունը, իսկ Լ. Վիտգենշտայնի՝ «Լեզուն ծանրաբեռնում և խաղաթյուրում է միտքը, որ ծնվում է մաքուր մտածողության գործընթացում, իսկ վերջինս ընթանում է առանց լեզվի գործածության» ասույթը Շուպենհայտերի՝ միտքը մահանում է այն պահին, երբ կերպավորվում է բարդ մեջ,— հայտնի աֆորիզմի գաղափարում է: Մաքուր մտածողության հնարավորությունը ընդունում են դասական տրամաբանության որոշ հետևորդներ: Տրամաբանական պոզիտիվիզմի այնպիսի ներկայացուցիչ, ինչպիսին Ռասսելն է, գտնում է, որ «Երբեմն կարծում են: որ չի կարող լինել միտք առանց լեզվի, սակայն ես չեմ կարող դրա հետ համաձայնել: Ես գտնում եմ, որ կարող է լինել միտք ու նույնիսկ չճշմարիտ և կեղծ հավատ՝ առանց լեզվի»⁶: Միջնադարյան ռացիոնալիստական փիլիսոփայության, նաև Նոր ժամանակների լեզվաբանության տրամաբանական դպրոցի ներկայացուցիչները ուղղակի կապ էին տեսնում լեզվի և մտածողության միջև, ավելին, նույնացվում էին տրամաբանական և քերականական կարգերը⁷, ընդ որում լեզուն դիտարկում էին իբրև տրամաբանության սուկական պատճենում, լեզվական աշխարհի կերպավորումը պայմանավորում տրամաբանության օրինաչափություններով: Լեզվի և տրամաբանության ուղղադիմ կապի ավանդույթը իր որոշակի գաղափարումը ստացավ XX դարում: Սեպիր-Ուորթի վարկած անունով հայտնի լեզվաբանական հարաբերականության տեսությունը փաստորեն զլխիվար շուտ տվեց լեզվի և տրամաբանության փոխհարաբերության դասական պատկերացումները, գտնելով, որ մարդկային մտածողությունը, աշխարհայացքի ձևավորումը մեծապես պայմանավորված է այն լեզվի առանձնատկություններով, որի կրողն է սովյալ անհատը, ժողովուրդը:

Ռեվար չէ տեսնել լեզվաբանական հարաբերականության տեսության իմացաբանական արմատները. այն հանգում է Վիլիելմ Ֆոն Հումբոլդտի լեզվափիլիսոփայությանը և էթնոլինգվիստիկայի ամերիկյան ներկայացուցիչ Էդուարդ Սեպիրի այն հայացքներին, որոնցում նա հնդկացիական լեզուները որոշ սովյալների հիման վրա փորձում էր ապացուցել ժողովրդի մշակույթի կախվածությունը լեզվի բնույթից: Սեպիր-Ուորթի վարկածի հայտնի տեսաբան Գ. Բրաուերը գրում է. «Իրերի աշխարհի ընկալման միջոցով Հումբոլդտը կամուրջ է գցում մարդկանց լեզվի և վարկեցողության միջև: Այդ շինությունը մոտավորապես հետևյալ տեսքն ունի. մարդկանց ընկալումն ու գործունեությունը կախված են շրջապատող աշխարհի մասին նրանց պատկերացումներից: Իսկ նրանց պատկերացումն ամբողջապես պայմանավորված է լեզվով: Հետևաբար, մարդկանց արարքներն ու գործունեությունը ամենայն էն նրանց լեզվից, մի դրույթ, որ դարձավ լեզվաբանական հարաբերականության կոնցեպցիայի զլխավոր կետերից մեկը»⁸: Իսկ ինտուիցիոնիզմի հիմնադիր, հոլանդացի մաթեմատիկոս և տրամաբան Լ. Է. Յան Բրաուերը ընդհանրապես ժխտեց լեզվի և մտածողության կապը, գտնելով, որ «Ինտուիցիոնիստական մաթեմատիկան մտքի ներքին, ոչ լեզվական գործունեություն է»⁹: Ռեվար չէ նկատել, որ թեև Բրաուերը ժխտում է լեզվի և մտածողության կապը, սակայն չի ապացուցում նաև մաքուր մտածողության գործունեության հնարավորությունը: Տվյալ դեպքում հենց ինտուիցիոնիստական մաթեմատիկան ներկայանում է իբրև լեզվին փոխարինող նշանային համակարգ, կամ, Մաքսի խոսքերով ասած՝ «ոգու» վրա ի սկզբանե ծանրացած անեծքը՝ նյութը:

Ամերիկայելի է այն փաստը, որ լեզվի և մտածողության փոխհարաբերության միտումնավոր քննարկումը՝ կախյալ աշխարհայացքային հայեցակետից, չի կարող լինել այն կախարդական «սեզանը», որը կբացահայտի հարցն իր ողջ բարդությամբ և բոլոր նրբերանգներով: Նույնիսկ անգն աչքով տեսանելի է, որ լեզվի և մտածողության միջև չկա լրիվ և բացառակ համապատասխանություն: Մտածողությունն ինքնին միատարր և միանշանակ չէ: Վ. Վ. Նալիմովը պնդում է մտածողության ձևերի ստորակարգության արկարթությունը¹⁰: «Մտածողությունն հասկացողությունը ներառում է երկու սկզբունքներն տարբեր հայեցակերպեր. խոսելով մտածողության մասին սովորաբար նկատի են ունենում ոչ միայն վերացական բովանդակությունը, ոչ միայն հասկացությունների, դատողությունների տեսքով իրականացվող վերացական

⁵ Л. Витгенштейн. Логико-философский трактат, М., 1958, с. 44.

⁶ Б. Рассел. Человеческое познание, М., 1957, с. 94.

⁷ Sævi Espersen. Философия грамматики, М., 1958, էջ 301:

⁸ Գ. Ա. Բրաուայն, Փիլիսոփայություն և լեզու, Եր., 1972, էջ 38:

⁹ L. E. Y. Brawer, Historical Background, Principles and Methods of Intuitionism.— South African Journal of Science, 1952, vol. 49, № 3—4.

¹⁰ В. В. Налимов. Вероятностная модель языка. О соотношении естественных и искусственных языков. М., 1979, с. 116.

գործընթացները, այլ նաև նրա զգացական-պատկերալին բովանդակությունը՝ ընկալման և ներկայացման պատկերների տեսքով»¹¹, — գրում է Վ. Ջ. Պանֆիլովը: Ուրեմն մենք գործ ունենք մտածողության սկզբունքորեն տարբեր առնվազն երկու կերպերի՝ վերացական և մտածողության և զգայական-պատկերավոր մտածողության հետ: Թերևս հենց զգայական-պատկերավոր մտածողությունն է, որ շատ հետազոտողների կողմից դիտվել է իբրև մաքուր, ոչ-լեզվական մտածողության արտահայտություն: Մեր դարի 70-ական թվականներին փորձնականորեն հաստատվեց, որ գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերի կեղևները «պատասխանում են» մտածողության տարբեր կերպերի համար¹²: Դուրս գալով, թերևս, այս փորձի արդյունքներից Վ. Ջ. Պանֆիլովը զարգացնում է իր իսկ ենթադրությունը. «Մարդու ուղեղի աջ և ձախ կիսագնդերը «ղեկավարում են» մտածողության տարբեր կերպերը. աջիկները մոտ հարանցի՝ առաջինը «ղեկավարում է» զգայական-տեսողական մտածողությունը, որն իրականանում է առանց բայական միջոցների, իսկ երկրորդը, այսինքն ձախը՝ վերացական, ընդհանրացված մտածողությանը, որն իրականացվում է միայն բնական լեզվի հենքի վրա (կամ, ավելացնենք, այլ բընույթի նշանալին համակարգերի)»¹³: Ակներև է, որ մենք կարող ենք վստահորեն խոսել մարդ արարածի մտածողական եզակի, անկրկնելի ունակության մասին՝ վերացական մտածողության մասին, որի համար գոյություն ունի ֆիզիոլոգիական հենք: Սակայն չչտապենք և փորձենք պարզել, թե մտածողության երկու տարբեր կերպերի համար մատերիայի բարձրագույն ձևը հանդիսացող ուղեղում համապատասխան կենտրոնների առկայության փաստն ինչպե՞ս կարելի է մեկնաբանել: Ակնհայտ է, որ հարցն անհրաժեշտ է դիտարկել լեզվի, մտածողության զարգացման տեսանկյունով: Նախ պետք է առանձնացնել մտածողության առանձին տիպերը.

1. Զգայական-տեսողական մտածողության զարգացում.

2. Վերացական մտածողության զարգացում:

Ակամա հարց է առաջանում. ի՞նչը կարող է փաստել քննության ընթացքում մտածողության վերոբերյալ կերպերի զարգացումը. իմացության պատմության մեջ այդպիսին կարող է լինել միայն լեզուն, ուրեմն և մարդկային լեզվի ընձեռած փաստերի քննությունը կարող է որոշ լույս սփռել առաջադրված հարցի լուծման վրա: Նախքան բուն խնդրի պարզաբանման անցնելը, անհրաժեշտ է լուծել ելակետային մի խնդիր. վերացական մտածողության ընդունակությունը ուղեղի համապատասխան կենտրոնին յուրահատուկ է եղել նախամարդուն ի սկզբանե՞, թե՞ ան մարդկային տիպի հետագա զարգացման արդյունք է: Տեսնենք, թե «բանական մարդու» առաջացումը ինչպես է ներկայացվում Մարքսի և Էնգելսի հայացքներում: Ելակետայինը այս խնդրում մարքսիզմի դասականների համար նախամարդուն իբրև հասարակական կենդանի ներկայացնելն է. «Իմ կարծիքով հասարակական ինստիտուտը եղել է ամենակարևոր ազդակներից մեկը կապի մարդացման գործում: Առաջին մարդիկ, հավանաբար, ապրել են հոտերով, և քանի որ մեր հայացքը կարող է թափանցել դադերի խորքը, մենք գտնում ենք, որ դա հենց այդպես էլ եղել է»¹⁴, — գրում է Էնգելսը: Դարերի խորքում «բանական մարդուն» նախորդող նախամարդը ներկայանում է իբրև հոտերով ապրած արարած՝ որի համար դեռևս խորթ է աշխատանքային պրոցեսը: «Մարդիկ սկսում են նրանից, որպեսզի ուտեն, խմեն և այլն, այսինքն «չկանգնել» ինչ-որ հարաբերության մեջ, այլ ակտիվորեն գործել, գործունեության օգնությամբ յուրացնել արտաքին աշխարհի հայտնի առարկաները և այսպիսով բավարարել իրենց կարիքները»¹⁵, — շարունակում է Վ. Մարքսը՝ նախամարդուն հանձնելով արդեն աշխատանքային գործիքներ: Չափազանց կարևոր է նկատել, որ մարդկանց միջև լեզվական հաղորդակցություն դեռևս չկա: «Աշխատանքի դերը կապի մարդացման գործում» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը ավարտում է «բանական մարդու» ձևավորման իր տեսությունը: Նա գրում է. «Աշխատանքի զարգացումը անհրաժեշտաբար նպաստեց հասարակության անդամների առավել սերտ համախմբմանը, քանզի նրա շնորհիվ ավելի հաճախակի դարձան փոխադարձ օգնության, համատեղ գործունեության դեպքերը յուրաքանչյուր առանձին անդամի համար: Կարճ ասած, ձևավորված մարդիկ հասան այնտեղ, որ նրանց մոտ պահանջ առաջացավ միմյանց ինչ-որ բան ասելու: Պահանջը ստեղծեց իր օրգանը»¹⁶:

Ավելի քան մեկ դար է անցել մարդու զարգացման այս տեսության ստեղծումից: Ինչպես ծճգրիտ, այնպես էլ հասարակագիտական և հումանիտար գիտությունները կատարել են նոր հայտնագործություններ՝ հասնելով որակապես մի նոր աստիճանի: Կարծում ենք, որ մարդու ձևավորման այս վարկածը կարիք ունի որոշ ծճգրուումների, իր ընդհանրության մեջ մնալով

¹¹ В. З. Панфилов, *Նշվ. աշխ.*, էջ 17:

¹² М. И. Панов, *Язык, мышление, логика в учении интуитионизма*—В кн.: *Логика и язык*. М., 1985, с. 113.

¹³ В. З. Панфилов, *Նշվ. աշխ.*, էջ 52:

¹⁴ К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 26, М., 1955, с. 403.

¹⁵ Նույն տեղում, հ. 19, էջ 377:

¹⁶ Նույն տեղում, էջ 489:

ոչ միայն ելակետային, այլև՝ օրինակելի: Ի դեպ, շատ հետազոտողներ տարբեր ժամանակներում փորձել են ինչ-որ կերպ մեղմել այս վարկածի որոշ հակասություններ՝ ելնելով դիպել-տիկական մատերիալիզմի սկզբունքներից¹⁷:

Բացի մարդուց, մեր մոլորակի ողջ կենդանական աշխարհը, ներառյալ ամենաբարձրակարգ մարդաճանն կապիկները, իրենց շրջապատի նկատմամբ ունեն զգայական-տեսողական ընկալում: Եվ ոչ մի մարդաճանն կապիկ չի կարող և երբևէ չի կարողացել երկու թեպետ և միմյանց շատ նման առարկաներից, իր մտապատկերում ստեղծել դրանք ընդհանրացնող ինչ-որ հասկացություն: Աշխարհի ամենալավ կենդանավարժի վարժեցրած ամենաբարձրակարգ մարդանըման կապիկի օգտագործած գործիքը փոքր-ինչ ձևափոխեք կամ միևնույն գործիքը ներկեք մի այլ գույնով և... «արտիստը» կխայտառակվի հանդիսատեսի առաջ: Ըստ երևույթին նկատելով այս կարգի հակասությունները, շրջանառության մեջ դրվեց այն տեսակետը, ըստ որի մարդացված կապիկները եղել են այլ բնույթի, տարբերվել են գոյություն ունեցող մարդաճանն: Կապիկներից: Նախամարդը չէր կարող կատարել որևէ աշխատանք, ստեղծել պարզագույն աշխատանքային գործիք՝ առանց վերացական մտածողության ընդունակության: Այսպես է ներկայացնում Վ. Զ. Պանֆիլովը այն պայմանները, առանց որոնց անհնար է աշխատանքային որևէ գործունեություն¹⁸:

Կարծես թե ստացվում է մի կախարդական շղթա. մի կողմից առանց աշխատանքային գործունեության հնարավոր չէր վերացական մտածողության առաջացումը, մյուս կողմից վերացական մտածողության առկայությունն է ստեղծում հնարավորություն՝ աշխատանքային գործունեության համար: Նկատելով այս հակասությունը, Պանֆիլովն անմիջապես ծանոթագրում է. «Մեր հայեցակետից, աշխատանքային գործունեությունը և վերացական, ընդհանրացված մըտածողությունը իրենցից ներկայացնում են մի այնպիսի միասնություն, որոնցից որևէ մեկը չի կարող դիտարկվել իբրև առաջնակի մեծ, սակայն նրանցից իրողորդ, առաջացման տրուով, աշխատանքային գործունեությունն է»¹⁹:

Մեզ համար հարցը պատկերանում է փոքր-ինչ այլ կերպ: Աշխատանքային գործունեություն կատարելու համար նախամարդուն անհրաժեշտ էր վերացարկման ընդունակություն՝ թեկուզ և սաղմնային, զարգացման ամենաստորին վիճակում: Վերացարկման ընդունակության առաջացումը տվյալ տեսակի զարգացման պատմության մեջ հենց դարվինյան այն հեղափոխությունն է, որով և առաջացել է ըստ էության նոր տեսակ, և հենց այդ պահը պետք է ընդունել իբրև սահման Homo Sapiens-ի առաջացման և տարբերակման համար: Ահա հենց այդ պահից է, որ մարդն սկսում է՝ աշխատել, և աշխատանքային գործունեության ընթացքում աստիճանաբար վերընթաց գծով զարգանում է մարդու վերացական մտածողության ունակությունը, իսկ այդ զարգացման գործում աշխատանքային գործունեությունն ունի ոչ միայն վճռորոշ, այլև բացառիկ դեր:

Մտածողության զգացական-տեսողական և վերացական տիպերի զարգացումը չէր կարող իր հետքերը չթողնել մարդկային լեզվի վրա: Զարգացման ստորին աստիճաններում գտնվող ժողովուրդների լեզվական փաստերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու որոշ հարցեր՝ ինչպես մտածողության երկու տիպերի՝ և լեզվի փոխհարաբերության, այնպես էլ զգայական-տեսողական և վերացական մտածողությունների փոխհարաբերության վերաբերյալ: Ելնելով հյուսիս- և հարավ-ամերիկյան հնդկացիական, հնասասիական, պապուասյան, ավստրալիական, որոշ աֆրիկյան և զարգացման ցածր աստիճանում գտնվող այլ լեզուների հաճախ միևնույն փաստերից՝ զանազան հետազոտողներ հանգում են տարբեր, նույնիսկ հակադիր տեսակետների: Տեսակետներից մեկն այն է (Լևի-Ֆրյուլ, Ուորֆ, Բուբրիխ, Կասիրեր), ըստ որի զարգացման ցածր մակարդակում գտնվող ժողովուրդների մտածողությունը և լեզվական աշխարհընկալումը տրամազծորեն տարբերվում են զարգացած ժողովուրդների մտածողությունից: Ուսումնասիրելով այդ ժողովուրդների կրոնական, ծիսական, լեզվական փաստերը՝ Լյուսիեն Լևի-Ֆրյուլն, օրինակ, հանգում է այն եզրակացության, որ տրամաբանական մտածողության տիպին նախորդել է նախատրամաբանական մտածողության մի շրջան՝ մարդու զարգացման պատմության մեջ: Հակառակ տեսակետի կողմնակիցները, հիմնվելով տրամաբանական մակարդակում մարդկային սեռի միասնության դրույթի վրա, գրեթե ծխտում են մտածողության առանձին տիպերի վճռորոշ ազդեցության հնարավորությունը լեզվական համակարգի ձևավորման վրա: Անմիջապես նշենք, որ երկու տեսակետներն էլ ծայրահեղ են և դրանով իսկ ձևափոխելի: Բնական լեզվով պայմանավորված, և ինչու միայն լեզվով, նշանային որևէ համակարգով պայմանավորված մտածողության յուրաքանչյուր դրսևորում արդեն իսկ վկայում է մտածողության գործընթացում վերացական մտածողության առկայությունը: Սակայն տարբեր

¹⁷ Տե՛ս օր. В. В. Бунак. Происхождение речи по данным антропологии. էջ 258 և որիչնեք: В сб. Происхождение человека и древнее расселение человечества. М. 1951:

¹⁸ Սանրաման տե՛ս В. З. Панфилов, նշվ. աշխ., էջ 27—28:

¹⁹ Նույն տեղում, էջ 28:

լեզուներում, կախված այդ լեզուներով խոսող ժողովուրդների զարգացման (լայն իմաստով) տարբեր աստիճաններից հնարավոր են վերացարկվածության տարբեր մակարդակներ: Վերացարկման ընդունակությունը հատուկ է մարդուն ընդհանրապես և այս տեսակետից՝ բոլոր լեզուներին: Որոշ լեզուներում թերևս հնարավոր է զգացական-տեսողական ընկալման ավելի կամ պակաս գերակայություն:

Որպեսզի ավելի ակնհայտ դառնա, թե իրենցից ինչ են ներկայացնում նախնական լեզուները, պետք է քննարկել նրանց բառապաշարային առանձնահատկությունները, ինչպես նաև լեզվական այն իրողությունները, որոնք զարգացած լեզուներում առանձնանում են վերացարկման մեծ գործակցով, այնպիսիք, ինչպիսիք են դերանունները կամ ասենք թվի, ժամանակի քերականական կարգերը:

«Այդ լեզուների (Նախնական—Ջ. 2.) ընդհանուր միտումն այն է, որպեսզի նկարագրեն ոչ թե ընկալող սուբյեկտի ստացած տպավորությունը, այլ տարածության մեջ առարկաների ձևը, զծագրությունը, դիրքը, շարժումը, գործողության կերպը, մի խոսքով այն, ինչը հնարավոր է ընկալել և նկարել»²⁰,— գրում է Լևի-Բրյուլը, նկատի ունենալով այս լեզուների, այսպես ասած, «գեղագրական» բնույթը: Այս տիպի լեզուների համար մասնավորապես նշվում է այն հանգամանքը, որ նրանցում լեզվական արտահայտությունն են ստանում շրջապատող բոլոր կոնկրետ առարկաները, մինչդեռ ընդհանուր անունները լեզվականորեն չեն արտահայտվում²¹:

Այսպիսի տեսակետի հետ չի կարելի համաձայնել հետևյալ նկատառումներով: Նախնական լեզուների բոլոր փաստերը չի կարելի քննարկել համաժամանակյա միևնույն հարթության վրա: Այսպես կոչված նախնական ժողովուրդները գտնվում են զարգացման, ճիշտ է, ցածր, սակայն տարբեր աստիճանների վրա, և, անշուշտ, ճիշտ չէ նախնական որևէ կամ մի խումբ լեզուների փաստերը ընդհանրացնել այդ տիպի բոլոր լեզուների համար: Այսուհանդերձ այդպիսի փաստեր կան. նենցեթենում կան առանձին բառեր գույների տարբեր նրբերանգների համար, սակայն չկա բառ՝ գույնի ընդհանուր նշանակությամբ: Մյուս կողմից, միևնույն նենցեթենում ձյան շուրջ 40 տարբեր անվանումների կողքին կա նաև ձյուն բառի ընդհանուր անվանումը: Նիվխերենում ծառերի, ձկների մի քանի տասնյակի հասնող առանձին անվանումների կողքան կան նաև ծառի, ձկան ընդհանուր հասկացությունները նշանակող բառեր²²: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նախնական լեզուների մեծ մասում բացակայում է լինել բայը՝ իբրև ընդհանուր հասկացություն²³: Ընդհանրապես հետազոտողների մեծ մասը նշում է Նախնական լեզուների բառապաշարների արտակարգ հարստությունը. հարավաֆրիկյան բավենդա բնիկների լեզվում առանձին բառեր կան անձրևի բոլոր տեսակների համար, նրանք հատուկ անվանումներ ունեն ժայռերի կամ քարերի բոլոր առանձին տեսակների համար: Այսպես էլ ոչ մի ծառ կամ թուփ չի կարող չունենալ իր անվանումը: Հնդկաստանի բնիկներից լուշինների լեզվում կան մրջյունների տարբեր տեսակներ նշանակող 10, զամբյուղի՝ 20, եղջերուի տարբեր տեսակների համար բազմաթիվ բառեր, սակայն և ոչ մի բառ՝ «եղջերու» հասկացության համար: Հյուսիս-ամերիկյան հնդկացիական քվամաթների լեզուն չի տարբերակում աղվեսի, սկյուռի, թիթեռի ընդհանուր հասկացությունները, մինչդեռ աղվեսի, սկյուռի և այլն առանձին տեսակներն ունեն իրենց անվանումները: Գոյական անուններն այս լեզվում բազմաթիվ են: Լոպպերենը տարբերում է առանձին անուններով մեկից մինչև վեց տարեկան եղջերուներ, այս լեզվում կան քսան բառեր սառուցի, տասնմեկ՝ ցորի, քառասունմեկ՝ ձյան բոլոր տեսակների համար: Նորգելանդական մաորիները առանձին բառեր ունեն շրջապատող բոլոր կոնկրետ առարկաների համար: Արևմտյան Ավստրալիայի բնիկները անվանում են երկրի մակերևութի բոլոր փոփոխությունները, բոլոր բարձրությունները, թուր ծախիճները, գետի բոլոր ոլորամները, սակայն ոչ մի բառով չեն կարող արտահայտել «գետ» ընդհանուր հասկացությունը²⁴:

Հետաքրքիր է նշել, որ հնաասիական լեզուներից Չակոտյան-Կամչատկյան լեզուները գոյականի համակարգում տարբերակում են մարդու-ոչ մարդու քերականական կարգը: Մարդ նշանակող գոյականները պատասխանում են «маки?» «ո՛վ», իսկ բոլոր այլ առարկաները՝ ja kym? ինչ-ո՞վ հարցերին²⁵: Աս թերես խոսում է այն մասին, որ չուկչիները, կորյակները և այլ հյուսիսային ժողովուրդներ իրենց հակադրում են մնացած ողջ շրջապատող աշխարհին: Լեզվական այս իրողության մեջ առկա է՝ մի կողմից զգացական-տեսողական մտածողությունը (ինքը՝ իբրև մարդ), մյուս կողմից՝ վերացարկված մտածողությունը (ինքը իր նմանների հետ՝ իբրև մարդ): Հետաքրքիր է, որ չուկչիների բուն ինքնանվանումը՝ լուորավետլաններ, բառացի

²⁰ Л. Леви-Брюль. Первобытное мышление. М., 1930, стр. 104.

²¹ Նույն տեղում, էջ 97:

²² В. З. Панфилов, նշվ. աշխ., էջ 12:

²³ Л. Леви-Брюль, նշվ. աշխ., էջ 101:

²⁴ Վերբերյալ բոլոր փաստերը տե՛ս Л. Леви-Брюль, նշվ. աշխ., էջ 114—115:

²⁵ Язык народов СССР, т. V, Л., 1968, стр. 235—252, 313.

նշանակել է իսկական մարդ²⁶: Յուցական դերանուններն ընդհանրապես ունեն վերացարկման բարձր աստիճան: Պարզվում է, որ չուկոտերենում կա ամենատարբեր նշանակությամբ ցուցական դերանունների նշանակալի քանակություն²⁷: Եսկիմոսյան-ալեուտյան լեզուներում ևս նրկատվում է ցուցական դերանունների բազմազանություն. Եսկիմոսերենի ավելի քան քսան ցուցական դերանուններից են уна (тана) այս, игна այդ, որոշ հեռավորության վրա, мана՝ դա, այն՝ շրջապատման մեջ, кана, այն՝ ներքևում՝ ջրի մոտ, ջրի վրա, շրջանում, ելքի մոտ, пикна, այն բարձր է, укна այն մոտենալիս, агна, այն անցնելիս, икна, այն մյուս կողմում, к'агна այն դրսի կողմից, угна, այն ելքի մոտ, памна, այն բարձրում, սարի վրա, самна, այն հարավային կողմում, Թովի մոտ, имна, այն անտեսանելի է, к'акымна, այն դրսից (ավելի մոտ, քան к'амна), имна այն անհայտը անցյալում, пакымна, այն շատ բարձրում, пигна, այն հետևից, կողքից, акымна, այն ինչ-որ բանի հետևում է²⁸: Յուցական դերանունների գրեթե նույնանման համակարգ ունի ալեուտերենը. «ցուցական դերանունները մատնանշում են այն առարկաները, որոնք խոսողի հարաբերությամբ գտնվում են որոշակի տեղում, դիրքում կամ ուղղությամբ»²⁹:

Նախնական ժողովուրդների լեզուներում չափազանց հետաքրքիր ձևով է արտատայտվում թվի գաղափարը: Ընդ որում, այս դեպքում ևս պետք է կարողանալ տարբերակել զարգացման տարբեր աստիճաններ նշող լեզվական փաստերը, որպեսզի հնարավոր լինի գտնել մոտավոր ձևով նշելու այս գաղափարի զարգացումը: Մեզ համար այժմ առավել կարևոր է անդրադառնալ այն փաստերին, որոնցում հնարավոր է տեսնել զգացական-տեսողական և վերացական մըտածողությունների առանձնահատկությունները, ազդեցության աստիճանը՝ լեզվական իրողության կերպավորման մեջ: «Ցածր շատ հասարակություններում (Ավստրալիայում, Հարավային Ամերիկայում և այլն) առանձին թվականներով արտահայտվում են միայն մեկ, երկու, պատահում է նաև երեք թվերը: Դրանցից բարձր թվերի համար բնիկներն ասում են «շատ, շատ»: Երեքը նշանակելու համար ասում են՝ «երկու, մեկ», չորսի համար՝ «երկու, երկու», հինգի՝ «երկու, երկու, մեկ»³⁰: Սակայն սա չի նշանակում, թե այս ժողովուրդները չեն կարող հաշվել հինգից բարձր: Հարցն, անշուշտ, կապվում է ընդհանրապես թվի գաղափարի լեզվական առանձնահատուկ կերպավորման հետ: Հնաստիական ժողովուրդների լեզուներում թվականների համակարգը կապվում է մատներով հաշվելու հետ. «Չուկոտերենում հաշվել բառացի նշանակում է «մատների վրա հաշվել»: Հաշվելու հիմքում ընկած է ձեռքի, երկու ձեռքի և մարդու՝ որպես ձեռքերի և ոտքերի բոլոր մատների կողի, անվանումները»³¹: Թվականների ձևավորման այսպիսի կերպը ըստ երկրաչափի կապվում է Omnibus ex nihilo ducendis sufficit unum-ամբողջը ոչնչից դուրս բերելու համար բավական է մեկը՝ սկզբունքի հետ: Սակայն սա իհարկե չի նշանակում, թե այս ժողովուրդների մոտ թվի գաղափարը ձևավորվում է միայն զգացական-տեսողական մտածողության շնորհիվ: Սա, թերևս, հատուկ է բոլոր ժողովուրդներին՝ իրենց զարգացման վաղնշական շրջանում:

Նախնական որոշ ժողովուրդների լեզուներում հնարավոր են գույականացված թվականների առկայություն: Այսպիսի բազմաթիվ փաստեր են բերում զարգացման վաղնշական շրջանում գտնվող ժողովուրդների լեզուները նկարագրող շատ հետազոտողներ, ինչպես նաև՝ Լյուսիեն Լևի-Քրյուլը իր «Նախնադարյան մտածողություն» աշխատության մեջ, որտեղ հատուկ բաժին է հատկացրել թվի գաղափարի առանձնահատկություններին. «...Ֆլորիդայում—նա կուա—նշանակում է տասը ձու,—նա բանարա՝— տասը զամբյուղ մթերքներով... Ֆիջիում—բուլա—նշանակում է հարյուր մակույկ, —կորո—՝ հարյուր կոկոսյան ընկույզ և —սալավո—հազար կոկոսյան ընկույզ... Ալյապես է Ֆիջիում. չորս մակույկ ծանապարհին անվանում են—ա վակա սակալ վա—»³²:

Լևի-Քրյուլի, Է. Կասսիերի բերած փաստերից առաջին հայացքից կարելի է մտածել, որ այդ լեզուներում կան միայն առարկայացված թվականներ: Համենայն դեպս նրանք դրանց զուգահեռ մաքուր թվականների գործածություն չեն նշում: Մինչդեռ այդպիսի փաստեր կան հնաստիական լեզուներում: Յակոնիայում բնակվող յուկագիրների ծագումնաբանորեն մեկուսացված լեզվում տարբերվում են քանակական թվականների երկու տիպեր: Նշենք, որ յուկագիրների լեզվում թվի գաղափար արտահայտող բառերը ձևաբանական տեսակետից միասեռ խմբեր չեն կազմում: Սովորական իմաստով քանակական թվականները կազմվում են երկու տիպի հիմքերից: Ըստ էության եզրակացությունը միանշանակ է. նախնական լեզուների թվա-

²⁶ Նույն տեղում, էջ 248:

²⁷ П. Я. Скорик, Грамматика чукотского языка, ч. 1. М.-Л., 1961, с. 138.

²⁸ Язык народов СССР. Т. V, Л., 1968, с. 376.

²⁹ Язык народов СССР, т. V, с. 395.

³⁰ Л. Левин—Брюль, նշվ. աշխ., էջ 120:

³¹ Язык народов СССР, т. V, с. 259.

³² Л. Левин—Брюль, նշվ. աշխ., էջ 129:

կանների իմաստաբանության մեջ առկա են ինչպես զգայական-տեսողական, այնպես էլ վերացական մտածողության արտահայտությունները՝ զգացական-տեսողական տիպի գերակայությամբ:

Ջննարկվող խնդրի պարզաբանմանը կարող է օգնել նաև զարգացման տարբեր աստիճաններում գտնվող լեզուների ժամանակի քերականական կարգերի իմաստաբանության ուսումնասիրությունը: Իմացաբանական ժամանակի ըմբռնումը մարդկային գիտակցության մեջ ունեցել է զարգացման որոշակի ուղի՝ հասնելու համար ժամանակի վերացարկված գաղափարին: Տեսականորեն կարելի է ենթադրել, որ այդ զարգացումը ընթանալու էր վերացարկման ստորին աստիճանից դեպի վերացարկման ավելի բարձր աստիճանը: Սա էլ, անշուշտ, կապվում է մտածողության զգացական-տեսողական և վերացական մտածողության լեզվական արտահայտության հետ: Լեզվական փաստերի ուսումնասիրությունը այս տեսանկյունից հաստատում է վերոբերյալ վարկածի հավաստիությունը: Միանգամայն հասկանալի է, որ մտածողության զգացական-տեսողական տիպի առկայությունը ժամանակի լեզվական արտացոլման մեջ վկայում է ժամանակի որևէ կոնկրետ հատված նշանակող ժամանակաձևի միջոցով: Ժամանակի ըմբռնման զարգացումը մտածողության ոլորտում ճիշտ կլիներ ջննարկել՝ ելնելով որևէ մեկ լեզվի վաղնջական և զարգացած փուլերի փաստերից: Սա, անշուշտ, կլիներ ջննարկվող հարցի բացահայտման իդեալական տարբերակ: Սակայն այդպիսի հնարավորություն չկա, քանզի և ոչ մի լեզու չի վկայված ժամանակի այդչափ ընդգրկուն տարածքով: Մենք, ըստ երկայնի, այսօր կամ գործ ունենք զարգացման ստորին աստիճանում գտնվող լեզուների հետ, կամ արդեն զարգացած լեզուների հետ, որոնց վաղնջական փուլի մասին կարելի է միայն հիպոթետիկ բնույթի ենթադրություններ անել: Ուստի և տեսական եզրահանգումների համար մտում է դիմել զարգացման տեսակետից միմյանցից տասնյակ հազարավոր տարիներով «բաժանված» լեզուների համեմատությանը: Եթե, օգտվելով Ուրբֆի տերմինաբանությունից, SAE-ն պայմանականորեն ընդունենք իբրև լեզվական որոշ ընդհանրություն և հարցը ջննարկենք SAE-ի շրջանակում, կպարզվի, որ այս լեզուների ժամանակի լեզվական արտահայտության մեջ նշույթավորվում է միմիայն վերացարկված ժամանակը, մինչդեռ զարգացման ստորին աստիճանում գտնվող լեզուներում խնդիրն այսպիսի միանշանակ լուծում չի ստանում: Այսպես կոչված նախնական լեզուների ժամանակի կարգի հարացույցներում իրենց լեզվական արտահայտություններն են ստանում մտածողության ինչպես վերացարկված, այնպես էլ ոչ վերացարկված՝ զգայական-տեսողական տիպերը: Ամերիկյան այգոնիկներն լեզվում ներկայի, անցյալի և ապառնիի համար գործածվում են ժամանակ ցույց տվող մակբայեր: Չինական լեզուն տարբերակում է երեք տեսակ անցյալ. 1) ու—անցյալ (բայց մեկ տարրուց պակաս և երկու օրից ավերի անցյալ), 2) ու—անցյալ՝ այսօրվաժից այն կողմ, հատկապես երեկ և 3) ցա—շատ անցյալ (հատկապես հեքիաթներում): Բանտու լեզուներից լույնորո լեզվում ներկան չորս տիպի է. ա) սովորական ներկա, բ) շարունակական ներկա, որ միայն հիմա է կատարվում և դեռ վերջացած չէ, այլ շարունակվում է, գ) virtual present՝ ցույց է տալիս, որ նոր, այս րոպեիս եղավ կամ սկսեց այդ գործը և հենց լինում է, ինչպես՝ «ծառը հենց ընկնում է վրադ», դ) ներկա կատարյալ, որ խոսած միջոցին վերջացել է: Այս լեզվում անցյալն էլ ունի չորս ձև. ա) մոտիկ անցյալ, բ) հեռու անցյալ, գ) մոտիկ շարունակական անցյալ, դ) not-yet tense՝ որ դեռ չի վերջացել և շարունակվում է: Ապառնին ունի երկու ձև. ա) մոտ ապառնի՝ 24 ժամից չի անցնում, բ) հեռու ապառնի, որ քանչորս ժամից ուշ է կատարվելու: Մաշոնա կամ չիսվինա լեզվում բայի բոլոր ժամանակները ունեն երկուական ձև, որոնք տարբերակվում են այսօր/այսօրվանից առաջ հակադրությամբ: Յաունգե լեզուն տարբերակում է երեք տիպի անցյալ՝ այսօր եղած, երեկ եղած, ավելի հին կամ անորոշ ժամանակ եղած: Ավստրալիական կամիլարոլ լեզվում տարբերակվում է չորս անցյալ՝ սովորական, այսօր եղած, երեկ եղած, վաղուց կատարված: Առաջին երեք անցյալներից առաջ կարելի է դնել նաև gir, որի բուն նշանակությունն է «իրոք, ծմբարիտ», ևս երեք անցյալի ժամանակաձև՝ հաստատական նշանակությամբ: Ապառնին էլ ունի երկու ձև՝ սովորական և 24 ժամում կատարելի: Առաջին ձևից առաջ հաճախ դրվում է yila «շուտով» կամ yerāla «իսկույն», որով ստացվում է անմիջական ապառնի: Յաուն լեզվում տարբերակվում են ապառնիի տասը ժամանակաձևեր՝ որոնք միմյանց հակադրվում են ինչպես կերպային, այնպես էլ ժամանակային հատկանիշներով: Դրավիդյան բրահուի լեզվում կա երեք տեսակ ներկա՝ արդիական, անորոշ և ներկա ապառնի: Աֆրիկյան մենդե լեզուն սահմանականի երեք ժամանակներից յուրաքանչյուրի համար ունի երեք ձև: Անցյալ շարունակականի հետ դրվելով ha, ge, wo մասնիկները՝ ստացվում են այսօրվանից առաջ, մոտիկ անցյալ, հեռու անցյալ նշանակող ժամանակաձևեր³³: Բերված փաստերը ակնառու կերպով նշում են մտածողության վերացարկված և ոչ վերացարկված տիպերի արտացոլումը ժամանակի լեզվական արտահայտության մեջ: Այն հատկապես ցայտուն է արտահայտվում անցյալ և ապառնի ժամանակային ոլորտներում, որը պայմանավորված է նշված ժամանակային ոլորտների տա-

³³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա., Երևան, 1959, էջ 35—46:

րածական ընդգրկուն սահմաններով: Զերականական ժամանակի ոչ վերացարկված ըմբռնումը կարելի է դիտել իբրև ժամանակի ըմբռնման զարգացման առաջին աստիճան: Իրական ժամանակի իմացաբանական անցյալ և ապառնի ժամանակահատվածների վերացարկումը ամբողջական անցյալ և ապառնի հասկացություններով իր արտահայտությունն է գտնում ժամանակի թերականական կարգում լեզուների զարգացման ավելի ուշ շրջանում: Այս դեպքում թերականական ժամանակի անցյալ և ապառնի եզրերը ընդգրկում են իմացաբանական ողջ անցյալ և ապագա ժամանակահատվածները: Հատկանշական է, որ վերացարկվում է նաև հաշվարկման կետը. որպես այդպիսին ընդունվում է ոչ թե իմացաբանական ժամանակի որևէ կոնկրետ հատված (ինչպես այսօր-ը), այլ խոսքի պահը՝ հոսոճն, վերացարկված ընկալական ներկա ժամանակը: Զերականական ժամանակի իմաստաբանության զարգացումը ենթադրում ենք երկու հիմնական օղակներով՝ վերացարկված/ոչ վերացարկված թերականական ժամանակի հակադրությամբ:

Հասկանալի է, որ զարգացման նշված օղակների ընդունումը չի բացառում ավելի ստորին և միջակա օղակների գոյության փաստը: Առկա լեզվական փաստերը հնարավորություն են տալիս բացահայտելու թերականական ժամանակի զարգացման ոչ վերացարկված և վերացարկված աստիճաններ: Ընդ որում, շատ կարևոր է նշել, որ նախնական շատ լեզուներում ժամանակի վերացարկված արտահայտության կողքին հանդիպում է ժամանակի ոչ վերացարկված արտահայտություն: Հաստատապես չի կարելի պնդել նաև, որ յուրաքանչյուր լեզու անցել է զարգացման այս երկու աստիճաններով: Սկսած այն պահից, երբ լեզուն տարբերակում է ժամանակի թերականական կարգը, կախված մարդկային գիտակցության զարգացման աստիճանից, լեզվում հնարավոր է ժամանակի վերացարկված և ոչ վերացարկված արտացոլում: Լեզվում ժամանակի ոչ վերացարկված արտահայտությունը պետք է դիտել իբրև ժամանակի լեզվական արտացոլման ավելի ստորին աստիճան, իսկ լեզուն միտում ունի դեպի թերականական ժամանակների վերացարկում:

Այսպիսով, մարդ արարածին ի սկզբանե հատուկ են մտածողության վերացական և զգայական-տեսողական տիպերը, ընդ որում՝ վերացական մտածողությունը յուրահատուկ է միայն մարդուն, և դրանով է նա հակադրվում մնացած ողջ կենդանական աշխարհին: Մտածողության նշված տիպերը իրենց արտահայտությունն են գտնում լեզվում: Զարգացման ցածր աստիճանում գտնվող, կամ, այլ կերպ ասած, պարզունակ լեզուներին բնորոշ է մտածողության զգայական-տեսողական տիպը, թեև նրանցում առկա է նաև վերացական մտածողության արտահայտությունը: Պարզունակ լեզուներն իրականության լեզվական արտացոլման մեջ օգտը վում են մտածողության թե՛ վերացական, թե՛ զգայական-տեսողական տիպերից՝ վերջինիս գերակայության պայմաններում: Մինչդեռ զարգացած լեզուներում պատկերը տրամազօրեն հակառակն է. լեզվում վերացական մտածողության գերակայման աստիճանը ուղիղ համեմատական է լեզվի զարգացմանը: Անհրաժեշտ է անպայման շեշտել, որ իրական աշխարհի լեզվական արտացոլման գործընթացում լեզուները միտում ունեն լեզվական կարգերի աստիճանական վերացարկման:

3. С. ЧАГАЯН—Выражение в языке абстрактной и чувственно-визуальной разновидности мышления.—Человеку изначально свойственны абстрактный и чувственно-визуальный типы мышления, причем абстрактное мышление присуще только человеку и этим он противопоставляется остальному животному миру. Указанные типы мышления находят свое выражение в языке. Для находящихся на низкой ступени развития языков характерен чувственно-визуальный тип мышления, хотя в них наличествуют элементы абстрактного мышления. Между тем в развитых языках преобладает диаметрально противоположное: в языке степень превосходства абстрактного мышления прямо пропорциональна его развитию. В статье подчеркивается, что в процессе языкового отражения реального мира языки имеют тенденцию к постепенной абстракции языковых категорий.